ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**16.09.2019թ. կնքված N <<ՉՀ-ԳՀԱՊՁԲ-19/5>> գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

ք. Չարենցավան <<30>> 09 2019թ.

**Չարենցավանի համայնքապետարանը**, ի դեմս համայնքի ղեկավար **Հ. Կ. Շահգալդյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ <<Գնորդ>>, մի կողմից, և **<<ՎԱՐԱԼ>> ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Ա. Սեյրանյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ <<Վաճառող>> մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 16.09.2019թ. կնքված N <<ՉՀ-ԳՀԱՊՁԲ-19/5>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ կետը, պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 30.09.2019թ.-ին ներկայացրած թիվ 3124/04 զեկուցագիրը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1 16.09.2019թ. կնքված N <<ՉՀ-ԳՀԱՊՁԲ-19/5>> գնման պայմանագրի գինը նվազեցնել **114400 (մեկ հարյուր տասնչորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամով, ընդ որում՝ ընդհանուր պայմանագրի գինը կկազմի 2173600 (երկու միլիոն մեկ հարյուր յոթանասուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ՝** ԱԱՀ-ն:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**<<ԳՆՈՐԴ>>**
**Չարենցավան համայնք**
**ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1**
**ՀՀ ՖՆ ԳՎ**
**Հ/Հ 900132161010**
**ՀՎՀՀ 03022497**

**Համայնքի ղեկավար՝**
**Հ. Կ. Շահգալդյան**

(ստորագրությունը)
Կ.Տ

**<<ՎԱՃԱՌՈՂ>>**
**<<ՎԱՐԱԼ>> ՍՊԸ**
**ք. Չարենցավան 4-րդ թաղամաս 11 շենք 53 բնակարան**
**<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ**
**Հ/Հ 16028025464200**
**ՀՎՀՀ 03023361**
**էլ. հասցեն seyranyan76@inbox.ru**
**Հեռ. (094) 00-34-00**

**Տնօրեն՝ Ա. Սեյրանյան**

(ստորագրությունը)
Կ.Տ